ԲԱՅՐՈՆ

Վենետիկի հարավային մասում ընկած Սուրբ Ղազար կղզում ապաստան էին գտել մի խումբ հայ վանականներ: Նրանք ունեին իրենց վանքն ու տպարանը և գրքեր էին հրատարակում: Մի ամբողջ ձմեռ, ամեն օր, անգլիացի մեծ բանաստեղծ Բայրոնը մակույկով գնում էր այնտեղ հայերեն սովորելու: Նա շատ էր զարմացել, որ այդ փոքրիկ կղզում բնակվող հայ վանականները կատարելապես տիրապետում էին եվրոպական բոլոր նշանավոր լեզուներին: Բայրոնի հայերենի ուսուցիչ Ավգերյանը մայրենի լեզվից բացի գիտեր հունարեն, լատիներեն, եբրայերեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն և իտալերեն:

Անգլիացի գրողը թե հայերեն էր սովորում, թե մխիթարություն և հանգիստ գտնում հյուրասեր ու գիտուն հայ վանականների շրջանում: Նա սիրով ծանոթանում էր հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին, հայերենից թարգմանություններ էր կատարում: Իր ուսուցչի օգնությամբ Բայրոնը կազմեց քերականական դասագրքեր ու բառարաններ՝ նպատակ ունենալով եվրոպացիներին ուսուցանել աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի լեզուն, սեր ու հետաքրքրություն առաջացնել հայերի հանդեպ:

« Ինչպես էլ եղած լինի հայերի ճակատագիրը, - իսկ դա անցյալում շատ դառն է եղել,- ինչպիսին էլ լինի ապագայում, նրանց երկիրը հավետ կմնա որպես աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մեկը », գրել է Բայրոնը:

Exercices

I. Modifiez les phrases en employant le subjonctif comme dans l'exemple :

Նա չի ուզում խոսել – թո՛ղ խոսի et *թո՛ղ չխոսի*

1. Նա չի ուզում կարդալ:
2. Նրանք չեն ուզում պատասխանել:
3. Նա չի ուզում ջրել ծառը:
4. Նա չի ուզում գալ:
5. Նա չի ուզում ճաշել:
6. Արամը չի ուզում լվալ հագուստը:
7. Ձին չի ուզում վազել:
8. Աստղիկը չի ուզում անել դասերը:

II. Répondez aux questions suivantes :

1. Ի՞նչ կանեիք, եթե անձրև գար:
2. Ի՞նչ կանեիք, եթե փող ունենայիք:
3. Ի՞նչ կանեիք, եթե ցուրտ լիներ:
4. Ի՞նչ կանեիք, եթե Երևանում լինեիք:

III. Formez des phrases composées d'un subjonctif et d'un conditionnel :

1. ջրել - ծաղկել
2. գրել - ստանալ
3. լինել - տեսնել
4. գալ - տալ
5. լուսանկարել - ունենալ
6. քաղել - ուտել